

7769

Մ. Զ. ԲԱԳԻՐՈՎ
Բ

ՆԻ

Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ



ԱԴՐԵԶԱՆԻ Կ(Բ)Կ
XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԲԱՆԱՉԵՎԸ



ԱԴՐԵԶԱՆԻ Կ(Բ)Կ
ԲԱԳՎԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ
XXII ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ԲԱՆԱՉԵՎԸ

ՅԿՊ2(47.924)
F-13

ԱԶՊԱՐՏՆԵՐԻ ԲԱԳՈՒ, 1937

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ:

ՅԿՊՀ (47-324)
F-13

Մ. Զ. ԲՈԴՐԻԴ
16 NOV 2006

ԱԴՐԲԵԶԱՆԻ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ
ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ



ԱԴՐԲԵԶԱՆԻ Կ(Բ)Կ
XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԲԱՆԱԶԵՎԸ



ԱԴՐԲԵԶԱՆԻ Կ(Բ)Կ
ԲԱԳՎԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ
XXII ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ԲԱՆԱԶԵՎԸ

192

ԱԶՊԱՐՏՆԵՐԻ ԲԱԴՈՒ 1937

7769

Մ. Զ. ԲԱԳԻՐՈՎ

ԱԴՐԵԶԱՆԻ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԾԴՐԵԶԱՆԻ Կ(Բ)Կ XIII ՀԱՄԱԴՈՒՄԾՐՈՒՄ

1937 թվի ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ

Ընկեր Ստալինը կուսակցության կենտրոնի փետրվար-
յան Պլենումում իր տված դեկուցման և յեզրափակման
խոռքի մեջ մարքսիստական-լենինյան անալիզի յենթար-
կելով մեր կուսակցական, խորհրդային և տնտեսական
կազմակերպությունների սխախներն ու թերությունները,
իրեն հատուկ լենինյան հեռատեսությամբ մեղ ուղիներ
ցույց տվեց և նշեց գրանք ուղղելու կոնկրետ միջոցառում-
ները:

Մեր անձակ ուսուցիչ լենինն ասել ե.

«... Բոլոր հեղափոխական կուսակցությունները,
վորոնք մինչև հիմա կործանվել են, — կործանվել են
նրանից, վոր մհծամտել են և չեն կարողացել տեսնել,
թե ինչումն ե իրենց ուժը, և վախեցել են խոսել ի-
րենց թուլությունների մասին: Իսկ մենք չենք կոր-
ծանվի այն պատճառով, վոր չենք վախենում խոսել
մեր թուլությունների մասին և սովորում ենք հաղ-
թահարել թուլությունը»...

(Լենին, հաստ. 27, հրատ. 1935 թվականի, եջ
260-261):

Վստահ իր ուժին և հզորությանը, չվախենալով «իր
թուլությունների մասին խոսելուց», մեր կուսակցություն-
նը կենսագործելով Համբ(ր)կ կենտրոնի փետրվար-մար-
տի Պլենումի վորոշումները և ընկեր Ստալինի ցուցումնե-
րը, բոլմելիյան քննադատություն և ինքնաքննադատու-
թյունը ծավալեց, համարձակ, վճռականորեն բացահյ-
տում և ուղղում ե իր սխալներն ու թերությունները:

Բացահյտելով մեր սխալները, ընկեր Ստալինն ասել
ե, վոր կուսակցական դեկավարները, հրապուրվելով տըն-
տեսական կամպանիաներով ու տնտեսական Փրոնտում ձեռք
բերած հաջողություններով, մոռացել են այնպիսի բանե-



1010
42976

3139-91

ըի մասին, վորոնց մասին բոլշևիկները մոռանալու իրավունք չունեն:

Ընկեր Ստալինն ասել է.

«Կապիտալիստական շրջապատռմը՝ դա դատարկ ֆրազ չէ, դա շատ ուեալ և անհանորժ մի յերկույթ ե։ Կապիտալիստական շրջապատռմը՝ դա նշանակում ե, վոր կա մի յերկիր—Խորհրդային Սիությունը—վորն իր մաս առցիւստական կարգեր ե հաստատել ե, բացի դրանից, կան շատ յերկրներ—բուրժուական յերկրներ—վորոնք շարունակում են կապիտալիստական կյանք վարել և վորոնք շրջապատռմ են Խորհրդային Միությունը, առիթի սպասելով, վորպեսզի հարձակվեն նրա վրա, ջախջախեն նրան կամ, համենայն դեպքու, ջատեն նրա ուժը և թուլացնեն նրան»։

Ընկեր Ստալինի տված գնահատականի հաստատումն են հանդիսանում ավելի ու ավելի սրվող հակասությունները կապիտալիզմի և սոցիալիզմի միջև։

Ամբողջ աշխարհի աշխատավորները տեսնում են սոցիալիզմի յերկրի ժողովուրդների յերջանիկ ու բերկրապեկանը, միաժամանակ իրենց վրա զգալով կապիտալիզմի բոլոր սարսափիները։

Կապիտալիստական աշխարհն ատում ե մեր յերկիրը, վորովհետև վերընս ամբողջ աշխարհի աշխատավորներին ուղիւ յե ցույց տալիս նրանց աղատագրման գործում։

Ճապոնական իմպերիալիզմը լկտիորեն նվաճում և ավերում ե Չինաստանի առանձին շրջաններն ու ամբողջ գավառները, իտալական Փաշվոմը գլխովին բնաջնջում ե հաբեշական ժողովրդին, գերմանա-իտալական Փաշխատական ինտերվենտները հարձակվում են Սպանիայի խաղաղ քաղաքների ու գյուղերի վրա, իր պատվի և աղատության համար մարտնչող ապանական հերոսական ժողովրդի կանաց ու յերեխաների մասսայական ապանություններ կատարում։

Ստալինյան Սահմանադրությունը, վորի ընդունումով հավերժացավ ընթացիկ տարին, հանրագումարի յե բերել մեր յերկրում սոցիալիզմի համաշխարհային-պատմական հաղթանակները, արձանագրել ե հաղթանակները, վոր

արդեն նվաճել են մեր յերկրի աշխատավորները, յերկիրը վորտեղ «արդեն հիմնականում իրադորժական ե կոմունիզմի առաջին Փազան՝ սոցիալիզմը»։ (Ստալին)։

Ստալինյան Սահմանադրությունը հանդիսանում ե ֆաշիզմի դեմ պայքար մղող բոլոր աշխատավորների դործողությունների ծրագիրը։ ԽՍՀ Միության նոր Սահմանադրությունը գրանցել ե մեր յերկրում նվաճված հարթունակները, յերկիրը, վորն իրագործել ե այն, «ինչի մասին նակները, յերկիրը, վորն իրագործել ե այն, յերազել են և շարունակում են յերազել միլիոնավոր ազնիվ մարդիկ կապիտալիստական յերկրներում»։

Ահա թե ինչու Փաշվոմը հարձակում ե պատրաստում մեր յերկրի վրա։ Ահա թե ինչու մենք պատրաստ պետք ե լինենք անխնա հականարվածի համար, պաշտպանելու համար մեր յերջանիկ ու բերկրալի կյանքը։

Ահա թե ինչու մենք իրավունք չունենք անձնատուր լինելու բերանբացությանը, անհոգությանը, բարեհոգությանը և քաղաքական կուրությանը։

Ահա թե ինչու կուսակցությունը և ընկեր Ստալինն այնքան սրությամբ պահանջում են յուրաքանչյուր բոլցելիկեց, կուսակցական և գոչ կուսակցական, ինչ տեղամասում ել նա աշխատելիս լինի, քոլցելիկյան, ներգործուն, հեղափոխական գողնություն, թշնամուն՝ ինչ դիմական տակ ել նա թագնվի, ճանաչելու լինինյան-ստալինյան հմտություն։

Տրոցկիստական-զինովյեկական և աջ բանդիտների նողկալի գավաճանական, զիվերսիոն և լրտեսական աշխատանքն ակնբախորեն ցույց տվեց պատերազմի այն կատաղի նախապատրաստումը, վորը տանում են Փաշխատական յերկրները, առաջին հերթին, Գերմանիան և Ճապոնիան։

Ընկեր Ստալինն ասել ե, վոր՝

«... Փամանակակից տրոցկիզմը քաղաքական հոսանք չե բանվոր դասակարգի մեջ, այլ վնասարաների, զիվերսանաների, հետախույզների, լրտեսների, մարդասպանների մի անսկրպունք և գաղափարազուրկ բանդա, բանվոր դասակարգի վոխերիմ թշնամիների մի բանդա, վորոնք վարձով գործում են ոտարերկրյա

պետությունների հետախուզական որդանների մոտ»:
Յեվ վոր՝

«...ժամանակակից տրոցկիզմի դեմ մղլող պայ-
քարում հիմա պետք են վոչ թե հին մեթոդները, վոչ
թե դիսկուսիաների մեթոդները, այլ նոր մեթոդներ,
արմատախիլ անելու և ջախջախելու մեթոդներ»:
(Ստալին, զեկուցում Համկ(ր)Կ կենտկոմի Պլենումում
1937 թ. մարտի 3):

Ահա թե ինչու մեզ հարկավոր ե՛լ ավելի քարձրաց-
նելով բոլչեկելյան դգոնությունը, ե՛լ ավելի հաստատորեն
տիրապետելով թշնամուն ճանաչելու ստալինյան ունակու-
թյանը, հետագայում ևս աշխատավորությանը և մեր յերի-
տասարդությանը դաստիարակել մեր Հայրենիքի բոլոր
թշնամիների նկատմամբ, սոցիալիզմի բոլոր թշնամիների
նկատմամբ անհաշտ ատելության վորով:

Ահա թե ինչու, ինչքան ել մեծ լինեն մեր հաջողու-
թյունները, ինչքան ել մեծ լինեն մեր հաղթանակներն ու
նվաճումները, մենք վոչ մի բողեք չպետք ե մոռանանք
մեր յերկրի թե ներսում և թե դրսում թշնամու նողկալի,
ստոր մեքենայությունների մասին:

Մենք չպետք ե մոռանանք, վոր մեր հաջողություննե-
րի աճը, մեր հաղթանակների աճը կհանդիպի սոցիալիզմի
թշնամիների ավելի ու ավելի ուժեղացող կատաղի դիմա-
դրությանը:

I

ԼԵՆԻՆՅԱՆ-ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԶԴԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՐ

Մեր յերկրում սոցիալիզմը վերջնականապես հաղթա-
նակել է:

Մեզ մոտ լիովին լիկվիդացիայի յեն յենթարկված շա-
հագործական դասակարգերը, վոչնչացված և մարդու շա-
հագործումը մարդու կողմից :

Բավական ե ասել, վոր ԽՍՀՄ-ի ժողովրդական յե-
կամուտում տնտեսության սոցիալիստական ձեվերի տե-
սակարար կշեռը կազմում և արդեն 99,5 տոկոս :

Սոցիալիստական խոշոր արդյունաբերության ընդհա-
նուր արտադրանքը 1936 թվականին հասավ հսկայական
դրումարի՝ 80,8 միլիարդ ոսուրու, իսկ 1937 թվականի պը-
լանով դա պետք է կազմի վոչ պակաս, քան 97,5 միլիարդ
ոսուրի (1926-1927 թվականների անփոփոխ գներով):

Պակաս մեծ չեն մեր սոցիալիստական դյուղական տըն-
տեսության նվաճումները :

Անդառնալիուրեն հաղթանակել են կոլտնտեսային կար-
գերը մեր գյուղում :

Առ 1-ը հունվարի 1937 թվականի կուեկտիվացումը
կազմել է բոլոր գյուղացիական տնտեսությունների 92
տոկոսը, իսկ կոլտնտեսային ցանքսերն այդ ժամանակին
կազմել են բոլոր գյուղացիական ցանքսերի 98,2 տոկոսը:

Վեթխարի չափերով առաջ և շարժվել մեր կոլտնտե-
սություններին և խորհանտեսություններին առաջակոր-
տեինիկայով զինելու գործը: 1936 թվականի վերջին մեր

գյուղական տնտեսությունն արգեն ուներ 438,5 հազար խորհրդային հիմնալի տրակտորներ և 93.200 կոմբայն:

Այս թվերի ամբողջ վեհությունը հասկանալու համար հիշեցեք անմահ լենինի խոսքերը, վորն ասել ե.

«... Յեթև մենք վաղը կարողանայինք տալ 100 հազար առաջնակարգ տրակտորներ, գրանց մատակարարներինք բենզին, ապահովելինք մեքենավարներով (դուք հիմնալի դիտեք, վոր դա առայժմ Փանտազիայի), ապա միջակ գյուղացին կատեր՝ «յես կոմունիայի կողմին եմ («այսինքն՝ կոմունիզմի կողմը») ...

(Լենին, Հատ. 24, Էջ 170):

Իսկ այսոր, մեր Խորհրդային հայրենիքի անծայրածիր, ծաղկող կոլտնտեսային և խորհանտեսային դաշտերում աշխատում են կես միլիոն առաջնակարգ տրակտորներ, Հարյուր հազարամյոր կոմբայններ:

Ահա թե ինչպես մեր առաջնորդ ընկեր Ստալինը կենսադորում է Վլադիմիր Իլիչի մեծ պատվամները: (Բուռարն, յերկարատեղ ծափահարություններ):

Ահա թե ինչպիսի առատ պառուներ ե տալիս այսոր մեր յերկրի ստալինյան ինքուսարացումը:

Սոցիալիզմի հաղթանակներն ընդմիշտ մեր յերկրի քաղաքացիներին աղատել են ճգնաժամների, գործազրկության, աղքատության ու անկուտտուրականության սարսափներից:

Անչափ բարձրացել ե մեր յերկրի աշխատավորների նյութական - կուլտուրական մակարդակը:

Մեր յերկրում դիտության և կուլտուրայի մեծագույն ծաղկման փայլուն հաստատումն և հանդիսանում Հյուսիսային բենոի՝ պրոգրեսիվ մարդկության լավագույն, առկանավոր մտքերի այդ դարավոր յերազանքի՝ նվաճումը հատկապես խորհրդային ժողովրդի կողմից: (Ծափահարություններ):

Սոցիալիզմի հաղթանակները մեր յերկրում, կուսակցության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակը հասցը են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտնող բո-

լոր հանրապետությունների բուռն տնտեսական-կուլտուրական ծաղկման:

Մեր ամբողջ յերջանիկ հայրենիքի հետ միասին աճումը ամբանում և խորհրդների յերկրի անբաժանելի մասը — սոցիալիստական Աղրբեջանը: Դրա համար փայլուն թվուարացիս կարող են ծառայել մի քանի թվեր, վորոնք բնորոշում են մեր հանրապետության իսկական ծաղկումը:

Միայն վերջին չորս տարում հիմնական շինարարության մեջ ամբողջ առաջին հնդամյալի 1.105 միլիոն ոուբլու հանդեպ ներդրվել ե 2.345 միլիոն ոուբլի, այսինուրեք յերկրորդ հնդամյալի 4 տարում ներդրվել են ավելի քըն յերկրորդ հնդամյալի 4 տարում ներդրվել են ավելի քան յերկու և կես անդամ ավելի միջոցներ, քան թե առաջին հնդամյալի բոլոր տարիներին:

1937 թվականի պլաններով նախատեսնված ե 837.900 հազար ոուբլու կապիտալ ներդրում: Աղրբեջանի ստալինյան յերկու հնդամյալներում Աղրբեջանի ժողովրդական տնտեսության մեջ մտցվում ե 4.287.900 հազար ոուբլի:

Հանրապետության բյուջեն, վոր հիմնականում արտացոլում է սոցիալ - կուլտուրական միջոցառությունների ծախքերը, 1932 թվականի 177.900 հազար ոուբլուց աճել ե մինչեւ 779.100 հազար ոուբլի՝ 1937 թվականին:

Աղրբեջանի խոչոր արդյունաբերության ընդհանուր արտադրանքի ծավալը 1936 թվականին կազմել ե 2.014 միլիոն ոուբլի, 1933 թվականի դիմաց տալով 60 տոկոս ավելացում: Առանց նավթի, Աղրբեջանի խոչոր արդյունաբերության ընդհանուր արտադրանքի ծավալը 1936 թվականին կազմել ե 900 միլիոն ոուբլի, այսինքն 11 անգամ ավելի, քան թե մինչև Աղրբեջանում խորհրդային իշխանություն հաստատվելը:

Բանվորների ու ծառայողների թվիը միայն Աղրբեջանի խոչոր սոցիալիստական արդյունաբերության մեջ 1936 թվականին հասել ե 124.300 հոգու, ստալինյան հընդամյակաների տարիներին տալով 80,4 տոկոս աճ:

Ահազին քաղաքական կարևորության փասուը պետք է համարել կանանց՝ առանձնապես աղրբեջանուհիների ներգրավումն արտադրության մեջ: Կանանց տեսակարար

Հվան Աղբրեջանի խոշոր արդյունաբերության բանվորների մեջ 1929 թվականի 6,2 տոկոսի հանդեպ 1936 թվականին հասել է համարյա 30 տոկոսի: Կանաց տեսակաբար կշուն ինժեներա-տեխնիկական աշխատողների կազմի մեջ միայնականի 12 տոկոսի:

Աղբրեջանի բանվորների և ծառայողների ամսական միջին աշխատավարձը 1936 թվականին կազմել է 254 ռուբլի, այսինքն ավելի քան յերկու անգամ դերազանցում է 1932 թվականի աշխատավարձի մակարդակից: Դա բացի սահատորիաների, հանդսույան տների, հիմանդության նպաստների, կանաց հղության նպաստների, բարձերեխաներու ու այլ և այլ նպաստների վրա պետության կատարած ծախքերի ահադին աճից:

Յեվ այսոր, ստալինյան հոգատարության, կուսակցության և կառավարության ողնության հետևանքով ցարական իմպերիալիզմի յերբեմնի հետամնաց գաղութը — Աղբրեջանը հանդիսանում է առաջավոր, տեխնիկապես դիմաց սոցիալիստական շքանշանակիր հանրապետություն: (Ծափահարություններ):

Ունեոր, կուլտուրական ու յերջանիկ կյանքի հիման վրա անշեղորեն աճում է մեր հանրապետության ազգայինակությունը, վրոր վերջին 10 տարում աճել է համարյա 38 տոկոսով: Այսոր Խորհրդային Աղբրեջանն ունի ավելի քան յերեք միլիոն ազգաբնակություն:

Մեր յերկրում ավելի քան յերբեք աճուր է ժողովուրդների ստալինյան բարեկամությունը: Ազգային խաղաղության և ժողովուրդների բարեկամության փայլունության և հանդիսանում Խորհրդային Աղբրեջանը, ինչպես և ամբողջ Խորհրդային Անդրկովկասը:

Խորհրդային Աղբրեջանի, ինչպես և Խորհրդային Վրաստանի և Խորհրդային Հայաստանի հաջողությունների մեջ բացառապես մեծ է 1922 թվականին Լենինի-Ստալինի սահմանադրությամբ ստեղծված Անդրկովկասյան Փեղերացիայի նշանակությունը, վորի կարգակերպման և ամրացման մեջ աչքի ընկնող պատմական դեր են խաղացել Լենինի և Ստալինի հավատարիմ զինակիցներ-անմոռանալի Սերգեյ Միրոնովիչ Կիրով և Սերգո Ռյանիկիձեն:

Անդրկովկասի բոլշևիկները, զեկավարվելով իրենց մարտական շտաբի—Համբկ(բ)կ Անդրկովկամի կողմից, իրավացիորեն կարող են պարձենալ իրենց հաղթանակներով սոցիալիզմի շինարարության բոլոր բնագավառներում՝ Անդրկովկասյան Փեղերացիայի դրոշի տակ:

Անդրկովկասը, վորը ժողովրդի ամենավախերիմ թշնամիների—մուսավաթականների, դաշնակների ու մենչեվիկների կողմից նրանց արյունոտ տիրապետության ըլլաջանում դարձվել եր ազգային սպանդի ասպարեզ, այսոր կոմունիստական կուսակցության դրոշի տակ, լենինյան ստալինյան ինտերնացիոնալիզմի դրոշի տակ մեր մեծ հայրենիքի սքանչելի մարզաբիտն և հանդիսանում:

Անդրկովկասյան Փեղերացիան, վորն իր պատմական դերն և կատարել անդրկովկասյան հանրապետությունների ամրացման, Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրացման մեջ, համաձայն Ստալինյան Սահմանադրության յենթարկվել և լիկվիդացիայի և Խորհրդային Աղբրեջանը նույնպես, ինչպես Խորհրդային Վրաստանը և Խորհրդային Հայաստանը, անմիջականորեն մտնում են ԽՍՀ Միության մեջ:

Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունները, վորոնց ստեղծել ու դաստիրակել է մեծ Ստալինը, իրավացիորեն պարձենում են նոր, աճած, մեր կուսակցության անսահման նվիրված զեկավարների բոլշևիկյան կաղբերով, վորոնց լավագույն ներկայացուցիչը հանդիսանում է հավատարիմ ստալինյան ընկ. Լավրենտի Բերիան: (Ծափահարություններ):

Ընկ. Բերիային ահադին ծառայություն և պատկանում Անդրկովկասի վերջին տարիների տնտեսական և կուլտուրական ծաղկման գործում, Վրաստանի, Հայաստանի և Աղբրեջանի ժողովուրդների յեղբայրական բարեկամության ամրացման, Անդրկովկասի բոլշևիկյան շարքերը Համբկ(բ)կ լենինյան-ստալինյան կենտրոնի և մեր սիրելի, հարազատ հայր և ուսուցիչ ընկեր Ստալինի չուրջը հետաղա համախմբման գործում: (Ծափահարություններ):

Աղբեկջանի, Վրաստանի ու Հայաստանի բոլցեկիներն
այսուհետև ևս կամբացնեն Անդրկովկասի՝ Մերձավոր Ա-
րեվելքի առաջանի վրա մեր մեծ Հայրենիքի այդ առա-
ջավոր պոստի յեղայրական ժողովուրդների ստալինյան
բարեկամությունը:

1010
4292

II
ԲՈԼՃԵՎԻԿՅԱՆ ԳՆՆԵԴԱՏՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ ԻՆՔՆԵՐՆԵՐԴԱՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑԱՑՏԵՆՔ ՄԵՐ ՍԽԱՆԵՐՆ ՈՒ
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնկերներ, Աղբեկջանի բոլցեկիների վերջին տարիների
հաջողություններն անվիճելի յեն: Մեր Համագումարի
խնդիրն ե, զորք հրավիրվել ե կուսակցության կենտրոմի
Պլենումի վորոշումների և ընկեր Ստալինի ցուցումների
հիման վրա, ծագալուն քննադատությամբ բացահայտել
կուսակցական օրենքների այն կոպիտ խախտումների ար-
մատները, զոր տեղի յեն ունեցել Աղբեկջանի կենտրոմի
աշխատանքում, այն սխալների ու վրիպումների, զոր
թույլ ե տվել Աղբեկջանի կոմունիստական կուսակցու-
թյան կենտրոնական կոմիտեն, այն խոչոր թերություննե-
րի, զոր տեղի յեն ունեցել մեր կուսակցական, տնտեսա-
կան և խորհրդային կազմակերպությունների աշխատան-
քում:

Մեր Համագումարի խնդիրն ե անխնա քննադատու-
թյամբ, առանց նկատի ունենալու անձնավորություննե-
րը, բացահայտել ինքնահանգստացման, բերանբացության,
անհոգության բոլոր փաստերը, զորոնք հասցրել են այն-
տեղ, զոր յերկար ժամանակ կուսակցության ու ժողովրդի
թշնամիները՝ ճապոնա-գերմանական – արոցկիստական
գործակալները, մուսավաթականները, գաշնակները, Հա-
կահեղափոխական նացիոնալիստները, անզատիք կատարել
են իրենց ականափոր, լրտեսական, դեմքերսիոն ու վնասա-
բարական աշխատանքը մեր ձեռնարկություններում, յեր-



կաթուղային ու ջրային տրանսպորտում, մեր կորտնաեսություններում, մեր կուլտուրական և գիտական կազմակերպություններում:

Միայն ծավալուն քննադատությամբ ու ինքնաքննադատությամբ մեր համագումարը կարող է գործնական միա ջոցառումներ նշել ամենաարագ կերպով մեր սխալներն ու թերությունները լիկվիդացիայի յենթարկելու համար, դիվերսիաների ու վնասարարության հետևանքները յերևան հանելու և արմատախիլ անելու, կուսակցության ու ժողովրդի բոլոր թշնամիների հետ անողոք հաշվեհարդար կատարելու համար:

Միայն այդպիսով համագումարը կողնի պատշաճ բարձրության հասցենու Աղրբեջանի բոլչեկների ամբողջ կուսակցական-քաղաքական աշխատանքը:

Միայն այդպիսով համագումարը կողնի Աղրբեջանի կուսակցական և վոչ կուսակցական բոլչեկներին կուսակցության ու կառավարության առաջադրանքները կատարելու դուրսում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աղրբեջանի բոլչեկներն իրավունք չունեն վոչ մի բողեք մոռանալու այն մասին, վոր նրանք գտնվում են մեր սոցիալիստական շինարարության ամենաավատասիանատու տեղամասում, այն տեղամասում, վորը կոչված ե ամբողջ ժողովրդական տնտեսությունը, մեր յերկրի ամբողջ պաշտպանությունն ապահովելու հեղուկ վառելիքով։

Ինչպես ենք մենք կատարում մեր այդ սրբազնագույն խնդերը։

Առաջին հնդամյակում հանվել ե 55.027.005 տոնն։ Յերկրորդ հնդամյակի չորս տարում հանված ե 74,5 միլիոն տոնն։ 1934 թվականին փորվել ե ընդամենը 790.880 մետր։ 1936 թվականին—1.404.907 մետր։ 1934 թվականին հորերի միջին խորությունը յեղել ե 805 մետր։ 1937 թ. առաջին յերկու ամսում—1.253 մետր։ Առաջին հնդամյակի տարիներին փորման ստանոկ-ամսի արագությունը կարգել ե 87 մետր։ 1936 ստանովական թվականին—582 մետր։

Սակայն յեթե մենք աշխատեցինք ավելի լով, յեթե մենք թույլ չտայինք բաղմաթիվ սխալներ ու բացեր, յեթե մենք ժամանակին հայտնաբերելինք, մերկացնելինք ու հաշվեհարդար կատարեցինք թշնամիներ։ Հետ, մենք այսոք կունենայինք հանութիւն և փորման ավելի մեծ աճ, ավելի մեծ հաջողություններ։

Առանձնապես խայտառակ կերպով ենք մենք աշխատում այս տարի։ 1937 թվականի 5 ամսում մենք յերկրին պակաս ենք տվել մինչև մեկ միլիոն տոնն նավթ։ Այդ այն ժամանակ, յերբ ունենք 2,5 հաղար կանգ տառած նավթահոր, վորոնց վրա կատարվող բոլչեկներն աշխատանքը, վորոնց ժամանակին շահագործման դնելը կտային որական վո՛չ մեկ հաղար տոնն նավթ։

Բադվի կաղմակերպության հենց նոր վերջացած կուսակցական կոնֆերանսը վորոշում ե հանել, վորպեսզի մինչեւ տարվա վերջը զործող հորերի քանակը հասցվի վոչ պակաս, քան 7.256։

Մեր համագումարը պետք ե իր ամբողջ հեղինակությամբ հաստատի Բադվի կոնֆերանսի այդ վորոշումը և պահանջի Բադվի, ամբողջ Աղրբեջանի բոլոր կուսակցական ու վոչ կուսակցական բոլչեկներից՝ լծվելու 7.256 գործող հորի համար մզգող պայքարին։

Նավթային արդյունաբերության աշխատանքի դիմավոր արգելակը հանդիսանում ե հորափորման հետ մնալը։ Բադվի կուսակցական կոնֆերանսն իր վորոշման մեջ մատնանշել ե այդ։

Մեր համագումարը պետք ե պահանջի բոլոր հորափորներից՝ անհապաղ ուղղել հորափորման Փրոնտը և անպայման կատարել ու գերակատարել հորափորման բոլոր առաջադրանքները, ըստ բոլոր նպատակների՝ հատուկ ու շաղբություն դարձնելով հետախուզական հորափորմանը։

Նավթի վերաբերմամբ խայտառակ կերպով հետ մնալը խոսում ե այն մասին, վոր մեր նավթային ձեռնարկությունների դեկավարները բոլոր անհրաժեշտ յեղակացությունները չեն հանել կենտրոնի Պիեռումի վորոշումներից, ընկեր Ստալինի ցուցումներից և Դանբասի մասին Համականությունի կենտրոնի ու ԽՍՀՄ-ի Ժողովական ժողովում համար առաջարկությունը։

Փոխանակ վճռական պայքար մղելու վնասարարության հետևանքները վերացնելու համար, ել ավելի ծավալելու քննադատությունն ու ինքնաքննադատությունը, ամբացնելու սոցիալիստական աշխատանքային ու արտադրական կարգապահությունը, աչքաթող են արել տնտեսության զեկավարումը, թուլացրել են պայքարը պրոպուլշիկների և արտադրությունը կազմալուծողների—մեր կուսակցության ու մեր յերկրի թշնամիների գեմ:

Մեր համագումարը պետք է պահանջի նավթային արդյունաբերության ամբողջ հրամանատարական կազմից, առաջին հերթին ընկ. ընկ. Սլուցկուց, Նիկիտինից, Վարունցից, Զեյնալովից, Կամլաձելյից, Կրիլովից, Յուզովիցից, Խսկենդերովից, բոլոր նավթագործներից՝ բոլշևիկյան պայքար մղել կենտրոնի Պլենումի և ընկեր Ստալինի ցուցումների իրադարձման համար:

Մեր համագումարը պետք է պահանջի նավթային արդյունաբերության բոլոր տնտեսավարներից և ինժեներատեխնիկական աշխատողներից, կուսակցության շրջկոմներից՝ ինչպես հարկն ե գլխավորել ստախանովյան շարժումը նավթային արդյունաբերության մեջ և ողնել յուրաքանչյուր ստախանովյականի, յուրաքանչյուր հարվածայինի, յուրաքանչյուր բանվորի կատարելու և գերակատարելու իր նորմաները, իր առաջադրությունները:

Անհողությունը, զգաստության բթացումը նավթային արդյունաբերության մեջ հասցրել են այն բանին, վորյերկար ժամանակի ընթացքում ժողովրդի թշնամիներ—ճապոնա-պերմանական ֆաշիզմի գործակալներ Բորցը, Գինզբուրգը, Նիկոլինը, Աշրափ Ալիկը, Մաթեվոսյանը, Վերշինինը, Մուսահելը, Մուսաշ Դադաշեվը և ուրիշներն ականափոր, վնասարարական աշխատանք են ատրել մեր նավթային արդյունաբերության կարևորագույն տեղամասերում:

Առանձնապես, վնասավել են այնպիսի տեղամասերը, ինչպես՝ հետախուզությունը, հորավորումը, կոմպրեսորային առաջին տնտեսությունը, նոր նավթաթոր գործարանների վնասարարությունը, տեխնիկական նոր կատարելագործությունների արմատացումը, եներգետիկ տնտեսությունը,

Թնդենաշինությունը, արդյունաբերական և կուլտուր-կենցաղային շնարարությունը:

Վնասը կպել ե նաև մեր յերկաթուղային ու ջրային արանսպորտին:

Ժողովրդի թշնամիներ Կուլիկինի, Լարցինի, Ալեսկերովի, Շուկլինի և ուրիշների զաղբելի գործողությունները կատարվել են յերկաթուղային տրանսպորտի կուսակցական կազմակերպությունների աչքի առաջ, վորոնք այնքան կույր, խուլ և անհող են յեղել, վոր չեն արձագանքել նրանց ականափոր աշխատանքի մասին արված ազդանշաններին, չեն տեսել այդ չարագործությունները:

Կասպարով յերկար ժամանակ անպատճե կերպով գործել ե ֆաշիստական վնասարարների շայկան, վոր սովորել եր տնտեսական և քաղաքական ազգարատը (Սավինիխ, Կուզովենկո, Շելցով, Կոլեսնիկով, Կարուչեվի և ուրիշները):

Կասպարի նախկին պետ Մենյայլովը, վոր ներկայումս հեռացված է աշխատանքից և զատի որված, ըստ եյության հանդիսացել ե կասպարում վնասարարական բանդայի քողարկողը, աջակիցը։ Հենց Մենյայլովն ե, վոր իր հետեւից Ստորին՝ Վուգյան նախագնացությունից կասպար է բերել թշնամիներ Սավինիխին, Կարուչեվին, Կոլեսնիկովին և ուրիշներին ու նրանց կասպարում դրել նավազնացության կարևորագույն տեղամասերում։

Վոչ մի կերպ չի կարող պատասխանատվությունից խուսափել կասպարի քաղբաժնի նախկին պետ Հասան Ռահմանովը, վորը փոխանակ կասպարում կուսակցական-քաղաքան աշխատանքն ապահովելու, փոխանակ կասպարի բոլշևիկների զաստությունը մոբիլիզացիայի յենթարկելու թշնամիների դեմ պայքարելու համար՝ իրեն շրջապատել և քծնողների խմբակով, անմաքուր, կասկածելի ժարդկանցով՝ Զավարկով, Աղբղովով, Գերմանով, Խրուցկով և ուրիշներով։

Այդ բոլորի հետևանքով նա աչքաթող է արել կուսակցության և ժողովրդի այնպիսի կատաղի թշնամիների հակահեղափոխական աշխատանքը, ինչպիսիք են կուսակցիներն, Սավինիխը և Մյուսները։

Ռահմանովը պետք է գիտակցի բոլշևիկի համար այն անթույլատրելի սխալների ամբողջ խորությունը, վոր ինքը թույլ ե տվել, այն պատասխանատվությունը, վոր ինքը կրում ե այդ բոլորի համար:

Ընկ. Ռահմանովը պետք է իր համար բոլոր անհրաժեշտ յեղակացությունները հանե՛, դասեր առնի իր սխալներից և իր հետագա աշխատանքում ամենակարծ ժամանակում պետք է ցույց տա և ապացուցի ամբողջ կուսակցությանը, վոր նա վճռականորեն ուղղել ե և վերջ և տվել կասպարում թույլ տված իր բոլոր սխալներին:

Զենարդյունաբերության մեջ մի շարք տարիների ընթացքում գործել են ժողովրդի թշնամիները, վնասարարների, գիլերսանտների խմբակը՝ պյատակովյան թափթափուկ կալեզայինի գլխավորությամբ: Նրանք իրենց վնասարարական աշխատանքն ուղղել են սառցարանային սարքավորման շնարարության տապալմանը, ձենորսարանների տնտեսության քայլքայմանը, շնարարական որյեկտների մեղնելուն:

Դրա հետեանքով, բացի վերջին տարիների 30 միլիոն ոռորի վնասից, Ազրբյանի ձենային արդյունաբերությունը, սկսած 1931 թվականից, սիստեմատիկաբար գըտնը և արտադրական ճեղքվածքի մեջ:

Ազրբյանի Ճենարդյունաբերության գեկավարները, տպացին հերթին ընկ. Ամիրասլանովը, պետք է բոլոր անհրաժեշտ դասերն առնեն դրանից, բոլոր անհրաժեշտ յեղակացությունները հանեն Կենտկոմի Պենումի վորոշումներից ու ընկեր Ստալինի ցուցումներից և հենց ամենամոտ ժամանակներս բոլչելիկան կարդ մտցնեն Աղբյանի ձենարդյունաբերության մեջ:

Բագվի մսակոմբինատը մեր Միության՝ առաջավոր տեխնիկայով հաղեցված խոշորագույն սննդի ճենարկություններից մեկն է: Հրապուրված իրենց հաջողություններով, կոմբինատի զեկավարներն անհողություն, մեծամասություն, սնապարձություն են ցուցարերել, դրանով իսկ դասակարգային թշնամուն հնարավորություն տալով տառնելու տիվերսիոն, վնասարարական աշխատանք:

1936 թվականի գեկտեմբերին կոմբինատում աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի կանոնների վնասարարական խախտման հետեանքով բանվորների հետ մի քանի գժբախտ գեպքեր են պատահել:

Դեկտեմբերի 25-ին մորթու և մազի ցեխի փակ չորանցում հրդեհ է աեղի ունեցել: Կարելի յե գարցյալ թրշնամու զաղբելի աշխատանքի վոչ քիչ փաստեր ըերել: Այդքայքայիչ աշխատանքը հաճախ վոչնչի յե հավասարեցրել ստախանովականների հերոսական աշխատանքը, իսկ մսակոմբինատի անհոգ, զգոնությունը կորցրած զեկավարներն ինքնահանդստացել են, հանգչել դափնիների վրա:

Ազրիբայի և մսակոմբինատի աշխատանքի մասին բավական են այս յերկու փաստերը, վորովեոյի պատկերացում ունենանք Սննդի արդյունաբերության ժողկոմատի մյուս ձեռնարկությունների զեկավարման դրության մասին:

Սննդի արդյունաբերության ժողկոմատի աշխատանքում, առաջին հերթին; անձնապես ընկ. Վասիլիկինի աշխատանքում, առայժմ չկա կազմակերպվածություն, չկա մտածվածություն, չկա պլանաչափություն: Զկա քննադատություն և ինքնաքննադատություն ինչպես ժողկոմատի ապարատում, այնպես և լորեստների և ձեռնարկությունների վարչություններում: Սննդի արդյունաբերության ժողկոմատի ապարատի հաշվետու-ընտրական ժողովում կուսկոմի քարտուղար ընկ. Յեղորովը վոչ մի խոսք չասաց ժողկոմ ընկ. Վասիլիկինի և նրա ապարատի աշխատանքի թերությունների մասին: Յեղորովը, միտժամանակ հանդիսանալով պատի թերթի խմբագիրը, քրնուղատական թղթակցությունները բաց է ի թողել և ժողովներում բացի և այդ թղթակցությունների հեղինակների ծածկանունները:

Ադրբեջանի կ(ր)կ կենտկոմի նոր կաղմը պետք է լուրջ կերպով զրադշի Սննդի արդյունաբերության ժողկոմատով և նրա ձեռնարկություններով:

Տեղական արդյունաբերության ժողկոմատի սիստեմում դրած ինքնաքննադատության ճնշումը, ընտա-

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒԻ ԽԵՒԽԻՐՆԵՐԻ

Անցնում եմ մեր գյուղական տնտեսության դրության շարժին:

Կոլտնտեսությունների թիվը 1933 թվականի հունվարի 1-ի 3.440-ից հասել է մինչև 3.654-ի 1937 թվականի հունվարի 1-ին, իսկ նրանց մեջ տնտեսությունների թիվը 171.948 տնտեսությունից հասել է 304.982 տնտեսության: Կոլեկտիվացման տոկոսը 45,5-ից բարձրացել է մինչեւ 84,5-ի: Մի կոլտնտեսության տնտեսությունների միջին թիվը 1933 թվականի հունվարի 1-ի 50 տնտեսությունից աճել է մինչև 83 տնտեսության 1937 թվի հունվարի 1-ին: Հետեւապես, այդ ժամանակաշրջանում կոլեկտիվացման աճըն ընթացել է առավելապես գոյություն ունեցող կոլտնտեսությունների խոչըրացման հաշվին:

Հանրայնացրած ցանքային տարածությունների տոկոսի 1933 թվականի 55,4 տոկոսից աճել է մինչեւ 86,9 տոկոսի՝ 1936 թվականին, իսկ բամբակի նկատմամբ՝ մինչեւ 90,4 տոկոսի: Յեթե 1933 թվականին մի կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում եր 141,5 հեկտար ցանքում, ապա 1936 թվականին արգեն ընկել է 247,2 հեկտար:

Յերկրորդ հնդամյակի չորս տարվա ընթացքում Աղբերբեջանի գյուղական տնտեսության մեջ (առանց ջրային տնտեսության) ներդրվել ե 227.515 հազար ոռորդի, վորի հետևանքով կոլտնտեսությունների և խորհունտեսությունների եներգո-զինվածությունը մեծացել է մի քանի անգամ:

Մինչև 1937 թվականի գարունն Աղբերբեջանում մենք ունենք՝ 57 ՄՏԿայան 1932 թվականի 29-ի գոխարեն. 60.960 ձիու ուժի չափով տրակտորային պարկ 1932 թվականի 14.837 ձիու ուժի պարկի դիմաց: ՄՏ կայաններում ե կոլտնտեսություններում կա 745 ավտոմեքենա 1932 թվականի 23-ի դիմաց: ՄՏ կայաններում կա 243 կոմբայն, վորոնցից 1932 թվականին բուրովին չի յեղել:

Յերկրորդ հնդամյակի տարիներին Աղբերբեջանում հիմնականում ավարտված է բամբակի արտադրության ամենագիտավոր պրոցեսների մեքենացումը. արակտորնե-

նեկանությունը, ստորաքարչությունը հասցրել են հնչալել ժողկոմատի ապարատի, այնպես ել առանձին ձեռնարկությունների մեծ աղտոտվածությանը, և այստեղից ել պատահական չե, վոր Տեղարդողկոմատի սիստեմում վերջին տարիներս տեղի յեն ունեցել նախահաշվային, բյուջետային, պլանային դիսցիբլինների մասսայական խախտումը, պերածախսեր, զեղծարարություններ, հափշտակումներ, և այլն:

Անտանելի յեն աշխատում թեթև արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկությունները: Այնպիսի խոչոր ձեռնարկություններ, ինչպիսին ե Վոլոդարսկու անվան Փաբրիկը, յեռամսյակային պլանը կատարել ե 89,6 տոկոսով, կաշվի գործարանները պլանը կատարել են միայն 83,8 տոկոսով, լենինի անվան տեքստիլ կոմբինատը՝ 85 տոկոսով և այլն: Թողարկվող արտադրանքի վորակը վոչ մի քննադատության չի դիմանում: Վոլոդարսկու անվան կարի Փաբրիկը 1936 թվականի ընթացքում արտադրական խոտանքի վրա կորցրել ե 93 հազար ոռորդի և տեքստիլային խոտանքի վրա՝ 233 հազար ոռորդի: Այս տարի դրությունն ել ավելի վատ ե:

Ընկ. Իբրահիմովը, վորը գլխավորում է թեթև արդյունաբերության ժողկոմատը, վոչ մի յեղրակացություն չի արել կուսակցության կենտրոնի Պլենումի վորոշումներից, դասեր չի հանել իր անցյալ աշխատանքում թույլ տված կուպտ սխալներից, չի վերակառուցել իր աշխատանքը, չի գլխավորել թեթև արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկությունները դասակարգային-խորթ տարրերից, անընդունակ աշխատողներից մաքրելու համար մղվող պայքարը, ժողկոմատը չի դարձրել իսկական արտադրական – տեխնիկական շտաբ, մինչեւ հիմա չի իջել բանվորների մասսայի մեջ, չի գլխավորել թեթև արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկություններում գոյություն ունեցող հարյուրավոր և հազարավոր ստախանովականների շարժումը, մինչեւ այսոր ել բոլշևիկյան կարգ կանոն չի մացրել թեթեկարդողկոմատի սիստեմում:

բով կատարվող հիմնական հերկը 1933 թվականի 53,3 տոկոսից հասել և 88,9 տոկոս՝ 1936 թվականին. առաջին զարնանափառը 1936 թվականին հասցրվել և 92,4 տոկոսի. բամբակի ցանքը 1933 թվականի 20,3 տոկոսից մինչեւ 72,5 տոկոսի՝ 1936 թվականին: Աճել և մի արակտորի միջին մշակումը՝ 1936 թվականին 486 հեկտար, 1934 թվականի 286 հեկտարի դիմաց: Այդ ժամանակամիջոցում աճել են նոր մարդիկ, վորոնք տիրապետել են իրենց արտադրության տեխնիկային, վորոնք ցույց են տալիս մեխանիզմների խելական բուլեկիլան ոգտագործում:

Եքանչանակիր՝ արտկառորիստ Մամեդովը (Քյուրզամիրի ՄՏ կայան) «ՍՏԶ» արակտորով 1935 թվականին մըշակել և 1.283 հեկտար, 1936 թվականին՝ 1.498 հեկտար:

Եքանչանակիր՝ կոմբայնավար Խուրամիկ Ռուսով (Աստրախան-Բազարի ՄՏ կայան) «Կոմունար» կոմբայնով 1935 թվականին հնձել և 429 հեկտար, իսկ 1936 թվականին՝ 878 հեկտար:

Կառում՝ իզմայլլվի ՄՏ կայանի արակտորիստներ Հաջիյեկ Յունուսը, Ռուսով Աբբասը և Ռահիմով Աբուլֆաթը 1936 թվականին «ՍՏԶ» արակտորով՝ մշակել են՝ առաջինը՝ 1.798 հեկտար, յերկրորդը՝ 1.631 հեկտար և յերրորդը՝ 1.562 հեկտար:

Կարելի յեր գեռ թվարկել տասնյակ և հարյուրավոր նոր, աճած մարդիկ՝ ստախանովյան շարժման ենտուղիաստներ՝ ապացուցելու այն, վոր մենք ունեցել ենք և ունենք շատ ավելի մեծ հնարավորություններ, վորպեսզի հանրապետությունում ընդհանուր ցուցանիշներն զգալիորեն ավելի բարձր լինելին, քան մենք ունենք:

Դա ասում եմ, վոր Հողժողկոմատի և մեր դյուդատընտեսական որդանների աշխատանքում ունենք կազմակերպչագործնական և քաղաքական-դաստիարակչական կարգի խոշոր թերություններ ու բացեր: Հողժողկոմատի սիստեմում և մեր հողայն որդաններում մենք ունենք աղտոտվածություն խորթ, հակախորհրդային տարրերով, վորոնք հողժողկոմ ընկ. Վեղիրովի ղեկավարության անհողության ու բերանականական հասկավարների անհոգության ու բերան-

բացության պայմաններում տարել ու տանում են քայլայիշ, կազմալուծիշ աշխատանք մեր դյուդատնտեսության մեջ: Միայն դրանով և Հողժողկոմատի, աեղական հողային որդանների ղեկավարների և ՄՏ կայանների գիրեկատընների անպետք աշխատանքով պետք ե բացատրել արակտորի մշակման այն ամոթակի ցածր ցուցանիշները, վոր տեղի ունեն մի շարք շրջաններում ու ՄՏ կայաններում՝ Նորաշենի ՄՏ կայան՝ 351 հեկտար մի արակտորին, Սահամթլիինը՝ 309 հեկտար, Լենգորանինը՝ 271 հեկտար և այլն:

Ընկերներ, կոլտնտեսությունների կազմակերպչամարնեական ամրապնդումը, դյուդական տնտեսության մեքենայացման աճը, աղբոտեխնիկայի արմատացումը, լայն ծավալած ստախանովյան շարժումը՝ մեր կոլտնտեսություններում ապահովել են բերքատվության խիստ բարձրացումը վերջին տարիների ընթացքում:

Բամբակի տարածությունների կայուն գրության պայմաններում, 1936 թվականին ընդհանուր արտադրանքը, 1933 թվականի համեմատությամբ, աճել է 50,7 տոկոսով: Բամբակի միջն բերքատվությունը, համեմատած 1932 թվականի հետ, զրեթե կրկնապատկվել է, իսկ 1933 թվականի համեմատությամբ ավել է 49,3 տոկոսով աճ (1936 թվականին՝ 10,3 ցենտներ՝ 1933 թվականի 6,9 ցենտների գիմաց):

Յեղիպտական բամբակի տարածությունը 1936 թվականին հասել է 50.900 հեկտարի՝ 1934 թվականի 25.900 հեկտարի զիմաց, իսկ արտադրանքը 1933 թվականի համեմատությամբ աճել է 2 և կես անդամ՝ 1936 թվականին՝ 35.100 տոնն՝ 1933 թվականի 14.900 տոննի զիմաց:

Աճել և նաև հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը, վորոնց ընդհանուր արտադրանքը՝ 1936 թվականին կազմել է 874.579 տոնն՝ 1933 թվականի 681.294 տոննի զիմաց:

Այդ ժամանակամիջոցում աճել են բամբակի բուլեկիլան բարձր բերքի վոչ սակավաթիվ առաջավոր մարտիկներ:

Իղմայլովա Ալիջան—կարյադինի շրջանի կիրովի անվան կոլտնտեսություն—հեկտարից հավաքել և 78 ցենտներ:

Լեյլս Գյուլուշը—Աղդաշի շրջանի Ֆրինովսկու անվան կոլտնտեսություն—հեկտարից հավաքել և 70,3 ցենտներ:

Տասնյակ բրիգադիներ իրենց բրիգադներում, ամբողջությամբ վերցրած, տվել են յուրաքանչյուր հեկտարից 43-48-49 ցենտներ բարձրորակ բամբակ:

Տարեց-տարի աճում ե բարձրաբերք կոլտնտեսությունների տեսակարար կշիռը և թիվը: 1936 թվականին 122 կոլտնտեսություններ տվել են 18-ից մինչև 30 և ավելի ցենտներ բերքատվություն: Աճել են բամբակ քաղցոնների հիանալի կաղրեր, վորոնք որական հավաքում են մինչև 500-600 կիլոդրամ:

Բամբակի վարպետների ծավալված մրցությունը ստախանովականների մեջ առաջացրել է հիանալի շարժում — 1937 թվականին հեկտարից տալու 90-100-120 ցենտներ բերք: Ազրբեջանի անվանի կոլտնտեսութիւնի բաստի Բադիբովայի նախաճենությանն արձադանքել են տասնյակ կոլտնտեսություններ, բրիգադներ ու ողակներ և, անկասկած, այդ կղանա Ազրբեջանում բամբակի բերքատվության հետագա վերելքի սկիզբը: Ամբողջ խնդիրն է՝ հստակորեն կազմակերպել և բոլցենիկորեն դեկանարել այդ սքանչելի շարժումը:

Կոլտնտեսությունների կազմակերպչական — տնտեսական ամրապնդման գործում, կոլտնտեսային նոր կաղրեր աճեցնելու գործում, կոլտնտեսությունների յեկամտայնությունը և կոլտնտեսականների ունելոր կյանքը բարձրացնելու գործում բացառիկ դեր ե խաղացել դյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրությունը: Գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրության կենսագործումը, կանոնադրություն, վորը բոլշևիկյան կարգ ու կանոն և մտցրել մեր կոլտնտեսությունների մեջ, խիստ բարձրացրել և աշխատանք՝ արտադրողականությունը կոլտնտեսություններում և ավելացրել նրանց յեկամտայնությունը:

Յեթե մեզ մոտ, հանրապետությունում 1935 թվականին կային ընդամենն ութ միլիոնատեր կոլտնտեսություններ, ապա 1936 թվականին նրանց թիվը հասել է մոտ 100-ի: Բահմանովի անվ. կոլտնտեսության (Սալյանի շրջան) գրամական յեկամուտները 1936 թվականին կազմել են 4.282.501 սուբլի, լենինի անվան կոլտնտեսությանը (Սարիբարագի շրջան) — 3.407.162 սուբլի, թելմանի անվան կոլտնտեսությանը (Նարիմանովի շրջան) — 5.032.824 սուբլի և այլն:

Կոլտնտեսությունների յեկամուտների աճն աշխորերի արժեքի զգալի բարձրացում և ավել:

Առանձին կոլտնտեսություններում մի աշխորի արժեքը 1936 թվականին կազմել ե՝

Սալյանի շրջանի Բահմանովի անվան կոլտնտեսությունում՝ 37 սուբլի 54 կոպեկ, Սարիբարագի շրջանի Որջոնի-կիձելի անվան կոլտնտեսությունում՝ 29 ռ. 66 կոպեկ, Զանգելանի շրջանի Բուղյուննու անվան կոլտնտեսությունում՝ 24 ռ. 80 կոպեկ:

Դա ասում ե, վոր կոլտնտեսությունների բոլշևիկյան զեկավարումը, զյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրության ազնիվ, բարեխիղդ կենսագործումը բոլոր պայմաններն են ստեղծում մեր բոլոր կոլտնտեսություններում աշխորերի այդպիսի բարձր արժեքներ ունենալու հսմար:

Սակայն, պետք է ամբողջ խստությամբ առել, վոր գյուղում խորհրդային ու կուսակցական որենքների մասնական կոսիս խախտումները, զյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրությունը կենսագործելու համար խկական պայքարի բացակայությունը, կոլտնտեսությունների դեկավար որդանների աղտոտվածությունը խորթ, հակախորհրդային տարրերով, վատնումները, հարշտակումները, կոլտնտեսային միջոցների ցաք ու ցրիկ տալը, կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին ուղղակի թալանելը հասցել են նրան, վոր մի շաք կոլտնտեսություններում աշխորերի վատաշակը բավականին ցածր է յեղել, մասնավորապես այնպիսի շրջաններում, ինչպիսին

ևն Վերդյակուղի, Զումանդի, Գուբաթըլի, Խոմայիլլի
ըրջանները:

Դա ասում են, վոր մենք մինչեւ հիմա ընդհուպ չենք
զբաղվել մեր բոլոր կոլտնտեսություններով, նրանց կյան-
քով, նրանց աշխատանքով, չենք զբաղվել բոլոր կոլտնտե-
սություններում զեկավար կազրերի ստուգումով, չենք
զբաղվել բոլոր կոլտնտեսությունների կազմակերպչառ-
տեսական ամրապնդումով։

Այս փաստերն ասում են, վոր մենք չենք նկատել,
աչքից փախցրել ենք կուսակցության և կոլտնտեսային
կարգերի այնպիսի վուսերիմ թշնամիների յերկարատեև,
անպատճե հակահեղափոխական աշխատանքը, ինչպիսին
են Հասան Սաֆարովը, Միրզա Մամեդ Կասումովը, Քե-
րիմ Աբրուլիլը, Ջենալովը, Միրսալակը, Զաֆարովը և
ուրիշները։ Կոլտնտեսությունները քայլայելու փորձերում
ժողովրդի թշնամիներն առանձնապես լայնորեն ողտագոր-
ծել են կոլտնտեսականների առանձին խմբերի մասնագոր-
սնիկականատիրական տրամադրությունները։ Մեղ մոտ
քիչ չեն դեպքերը, յերբ կոլտնտեսականներն իմաստ կոլ-
տնտեսությանը կոլտնտեսային հողում ունեն թաղցրած
անհատական ցանքներ։ Շամախու շրջանի Կաշիշ դյուդում
հացահատիկայիների անհատական ցանքներ ունեն առանց
բացառության բոլոր կոլտնտեսականները։ Սարիբարազի
շրջանի Քյուրքենդ դյուդի Ստալինի անվան կոլտնտեսու-
թյունում 12 կոլտնտեսականներ ունեն մեկից մինչեւ յերեք
հեկտար անհատական ցանքներ։

Փոխանակ դյուդատնտեսական արտելի կանոնադրու-
թյան այդ աղաղակող խախտումների գեմ անխնա պայքա-
րելու, յերբեմն կոլտնտեսությունների առանձին զեկավար-
ներ իրենք են կատարում այդ հանցանքները։ Ղաղախի շրջ-
անի Զայլ՝ դյուդի Ստալինի անվան կոլտնտեսության կուս
կաղմակերպիչ Հյուսեյն Յուսուփովը մեկ և կես հեկտար
հեկտած կոլտնտեսային հողը հանձնել և մենատնտես նա-
մազ Ալի ողլուն, զորն այդ հողամասում կիսու ցորեն և
ցանել։ Թառովի շրջանի Յանրխի դյուդի 26-ի անվան կոլ-
տնտեսության նոխին նախագտահ՝ կոմյերիստական Ֆար-

զալին 5 հեկտար կոլտնտեսային հողը վաճառել և Կովոյար
գյուղի բնակիչ մենատնտես Հումբաթին։

Կոլտնտեսային հողերը վարձակալման տալու և վա-
ճառելու համաման փաստեր կան նաև ուրիշ շրջաննե-
րում։ Գյուղայի շրջանի մի շարք կոլտնտեսություններ
1936 թվականին կատարել են առհավետ ոգտագործման
համար կոլտնտեսություններին հատկացված հողերի վա-
ճառը (Կարաբախկալ դյուդի «Զամեթ» կոլտնտեսություն,
Մոլոտովի անվան կոլտնտեսություն և այլն)։

Այդ փաստերն այլ կերպ չափեաք ե դիտել, քան վորպես
թշնամու հակակոլտնտեսային աշխատանք՝ մեր շրջանային
կուսակցական, խորհրդային և հողային որդանների թող-
տվությամբ։ Այդ փաստերը պետք է դիտել վորպես գա-
սակարգային թշնամու պայքարի ձեւերից մեկն ընդդեմ
խորհրդային իշխանության, ընդդեմ կոլտնտեսային կար-
գերի։

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտ-
ման վոչ պակաս բնորոշ փաստ և հանդիսանում մեծ քանա-
կությամբ անսառունների առկայությունը կոլտնտեսական-
ների անհատական ողտագործման մեջ, վորը շատ ավելի
գերազանցում և գյուղատնտեսական արտելի կանոնադրու-
թյամբ սահմանված նորմաներից։

Շամխորի շրջանի «Պրավդա»-ի անվան կոլտնտեսու-
թյան կոլտնտեսական Մուսա Քերբալայ Մադըլի ողլին իր
անձնական ողտագործման տակ ունի 11 կոլ և 70 դլուխ
վոչխար ու այծ։ Բարգայի շրջանի Մամեդյարովի անվան
կոլտնտեսության կոլտնտեսական Բեյրութ Խալիլ ողլին
ունի 49 դլուխ խոչըր և 55 դլուխ մանր անսառուն։ Աղջամի
շրջանի «Յերբորդ Խնտերնացիոնալ» կոլտնտեսության մեջ
Ամիր Ալիստան ողլին ունի 6 կով, յերկու ձի, յերկու եղ,
մի գոմեց, 15 վոչխար և այլն։

Միանդամայն ակներեւ և, վոր այդպիսի դրության
գեղքում այդպիսի «կոլտնտեսականներն» իրենց ժամանա-
կի ու աշխատանքի մեծ մասը հատկացնում են անձնական
տնտեսությանն՝ ի վնաս կոլտնտեսության, վորը նրանց
համար վարագույր ե հարկային և այլ առւրքագրումներից
քողարկվելու համար և այլն։ Այստեղից ել զարմանալի

չե, վոր կան տասնյակ այսպիս կոչվող կոլտնտեսականներ, վորոնք մի տարում մշակում են 15-20-25 աշխոր և այլն:

Դա առում ե, վոր Հողժողկոմատը և մեր շրջանային հոգային ու կուսակցական կազմակերպությունները բարու կոլտնտեսություններով չեն զբաղվում, չեն զեկավարում նրանց, շատ կոլտնտեսություններ թողնված են իրենք իրենց:

Դա առում ե, վոր մենք կոլտնտեսությունների վարչություններում մեծ ազտուավածության ունենք տրոցկիստական-մուսավաթական տարրերով, վորոնք իրենց ականափոր աշխատանքն են տանում կոլտնտեսությունների ներսում:

Այստեղից ել այդ կոլտնտեսություններում դյուդանանական արտելի կանոնագրության չարամիտ խախտումները և կոլտնտեսային միջոցների ցաք ու ցրիվ տարու, և կ լուսանությունների ու կոլտնտեսականների կողովառամբ, մասսայականորեն աշխատանքի գուրս չփալը գյուղատնտեսական աշխատանքների յեռ ու գեռին, դժգոհություններ ստեղծելը կոլտնտեսականների մեջ, Հականորդային ադիսացիան և այլն:

Կարո՞ղ եյին, արդյոք, տեղի ունենալ գյուղատնտեսական արտելի կանոնագրության խախտումները, յեթե կոլտնտեսությունները զվարկորեյին ատուգված, կուսակցության ու խորհրդային իշխանությանն իրոք նվիրված մարդիկ: Իհարկե, վոչ: Խսկ այդ բոլորն ատացվում ե հենց այն պատճառով, վոր մենք թույլ ենք զբաղվում կոլտնտեսային կարերով, վոր Հաճախ իրենք շրջանային կազմակերպությունները խախտում են գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, անտեսանելով կոլտնտեսային գեմոկրատիան, գյուղատնտեսական արտելի կանոնագրությունը:

Վերջին յերկու տարում մենք մեծ աշխատանք ենք ծավալել մեր շրջաններում գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը կենսագործելու համար, առանձնապես խիստ ենք գրել այն հարցը, վորպեսի կոլտնտեսությունների նախագահներն ընտրվեն կոլտնտեսության ան-

դամների կազմից: Սակայն կան շրջաններ, ինչպես Գուբաթլուն, վորակ 90 կոլտնտեսություններում կոլտնտեսությունների նախագահներ վաթաթել են դրսի մարդկանցից, վորոնք ընդհանուր վոշինչ չունեն տվյալ կոլտընտեսությունների հետ:

Առ. 1-ն հունվարի 1936 թվականի 3221 կոլտնտեսությունների նախագահների սոուղված կազմի կեսից ավելին (1678 հոդի) այդ աշխատանքում աշխատել են մի տարուց պակաս:

Խաչմաղի շրջանում շրջանդադարի տեղակալ Խասրուլատովի Համել և Անդրֆեներացիայի անվան կոլտնտեսության նախագահ Հյուսեյնովին, վորն այստեղ աշխատում էր 1933 թվականից և նրա տեղն անց է կացրել նախկին ձայնագրության կարգաման Հաջիկին, վորը կարծ ժամանակի ընթացքում այստեղ քայլայել և ամրող աշխատանքը:

Ղուբայի շրջանում Արբուլ կասիմ Ալիկը չարարկությունների Համար Հեռացվել և Կարլ Մարքսի անվան և Պոստիշևի անվան կոլտնտեսությունների նախագահի աշխատանքից: Զնայած դրան, շրջկոմը նրան նշանակել և Մոլոտովի անվան կոլտնտեսության նախագահ, Վորտեղ նա աշխատանքը քայլայելով, կոլտնտեսության միջոցները ցաք ու ցրիվ տալով, կոլտնտեսականներին կողովուելով, հետո հենց ինքը լկտի Հականեղափոխական դրաբանությամբ հանդես է յեկել կոլտնտեսային շինարարության և խորհրդային իշխանության գեմ:

Ահա թե վորակ և հասցնում վոչ կուսակցական, վոչ բուլեկիյան մոտեցումը կոլտնտեսությունների ղեկավար կագրերի ընտրության ու դասավորմանը:

Միմիայն կուսակցականությունը կորցնելու հետեանքով, միմիայն մեր շրջանների և կոլտնտեսությունների ղեկավարության համար պատասխանատվության տարրական պահանջների մոռացության հետևանքով, միմիայն մեր կողմից զգոնության բթացման հետևանքով կարող ելին աեղի ունենալ թշնամիների անպատիժ, լկտի, Հականեղափոխական աշխատանքի փասերը—ոտարերկրյա հետախուզությունների առաջադրանքով:

Խորթ, թշնամի տարրերով կոլտնտեսությունների առանձնապես ազտոտվածությամբ աչքի յե ընկնում նուխու շրջանը: Դա պատահական չէ: Փաստաթղթերն ու փաստերը խոսում են Նուխու շրջկոմի նախկին քարտուղար Զուկարլինսկու, վորպես յերկերեսանու մասին: Զուկարլինսկու աշխատանքը նուխու շրջանում հիշեցնում է ժողովրդի մերկացված թշնամիներ Միրզա Մամեդ Կասումովի և Զեյնալովի աշխատանքը Սարիբարադում, Քերիմ Աբդուլովի, Կուլիկե և ուրիշների աշխատանքն Ալի-Բայրամլիի շրջանում:

Կուսակցական և խորհրդային որենքների խարխտումները մի շարք կոլտնտեսություններում, գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները, աշխատանքի քայլայումը կոլտնտեսություններում, կոլտնտեսային միջոցների ցաք ու ցրիկ տալը և հափշտակումը, կոլտընտեսականներից գողանալը—այդ բոլորը թշնամու պայքարի ձևերն են ընդգեմ խորհրդային պետության, ընդգեմ կուտնտեսային կարգերի:

Դիվերսիոն-վնասարարական աշխատանքի փաստերը, վոր բացահայտվել են Ալի-Բայրամլի, Կոնաղքենդի, Գյողչայի և ուրիշ շրջաններում, դեռևս դաս չեն դարձել մեր վորոշ զեկավար աշխատողների համար, վորոնք առաջվա պես յենթակա յեն իդիոտական հիվանդության՝ անհոգության, քաղքենիսական բարեհոգության և քաղաքական կուրության: Հատկապես դրա հետևանքով մեղ մոտ դեռ ամենուրեք չե, վոր մինչեւ վերջ լիկվիդացիայի յեն յենթարկել թշնամու գիվերսիոն-վնասարարական աշխատանքի հետևանքները: Յերեք ամսից ավելի յե անցել կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի Պլենումից հետո: Մեր շրջկոմներից շատերը դեռ մինչեւ այսոր ել իրենց աշխատանքը չեն վերակառուցել կենակոմի Պլենումի վորոշումների և ընկեր Ստալինի ցուցումների հիման վրա:

Մեր շրջանային կուսակցական զեկավարներից շատերն ինքնահեռացել են գյուղական տնտեսության կոնկրետ, բոլշևիկյան, ամենորյա զեկավարությունից, ամենից առաջ մեր կոլտնտեսությունների զեկավարությունից: Նը-

քանք մոռացել են ընկեր Ստալինի ցուցումներն այն մասին, վոր

«Կուսակցական կազմակերպություններին տնտեսական մանրությներից ազատելու և կուսակցական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու վերաբերյալ բանաձևի հայտնի կետի իմաստը կայանում է վոչ թե նրանում, վորպեսզի հեռանանք տնտեսական աշխատանքից և տնտեսական զեկավարությունից, այլ միմիայն նրանում, վորպեսզի այսու թույլ չտանք տընտեսական որդանների, այդ թվում և մանավանդ հոգային որդանների փոխարինման և դիմաղրկման պըղային որդանների գործական մեր կուսակցական կազմակերպություններական մերկաբեկան մեր կուսակցական կազմակերպությունների կողմից: Հետեաբար, անհրաժեշտ ե յուրացնել տնտեսական որդանների բոլշևիկյան զեկավարման մերժողը, վորը կայանում է այն բանում, վորպեսզի սիստեմատիկաբար ողնենք այդ որդաններին, սիստեմատիկաբար ամրացնենք դրանք և տնտեսությունը զեկավարենք վոչ թե անտես անելով այդ որդանները, այլ նրանց միջոցով: Հարկավոր է տնտեսական որդաններին և նախ և առաջ հողային որդաններին տալ գալագույն մարդիկ, հարկավոր է այդ որդանները համարել նոր, լավագույն աշխատողներով, վորոնք ընդգունակ են կատարելու իրենց վրա դրված խնդիրները: Միայն այն բանից հետո, յերբ կատարված կիենի այդ աշխատանքը, կարելի կլինի հուսալ, վոր կուսակցական կազմակերպությունները լիովին ազամած կլինեն տնտեսական մանրությներից: Հասկանալի յէ, վոր այդ գործը լուրջ ե և վորոշ ժամանակ և պահանջում: Բայց քանի զեռ այդ արված չե, կուսակցական կազմակերպություններին հարկ կլինի այսուհետեւ ևս, վորոշ կարձ ժամանակամիջոցում ընդհուպ զրադիլ գյուղատնտեսական գործերով՝ նրանց բոլոր մանրությների հետ միասին, վարով, ցանքսով, բերահակառով և այլն»:

Ընկեր Ստալինի այդ ցուցումների մոռացությամբ միայն պետք է բացատրել մեր մի շարք շրջկոմների ինքնահեռացումը մեր կոլտնտեսությունների ամենորյա, կոն-

կրեա զեկավարումից, պրակտիկ ոգնությունից, մեր կոլ-
տնտեսությունները խորթ, հակախորհրդային տարրերից
հետագա մաքրումից, կոլտնտեսություններում ստախա-
նովյան շարժման կաղմակերպումից և զեկավարումից՝
բարձր բերքի, 1937 թվականին 250 հազար տոնն բամբակի
համար մեր կոլտնտեսությունների մղած պայքարի դեկա-
վարումից:

ԿՈՌՊԵՐԱՅԻՆ, ԱՌԵՎՏՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մենք ե՛լ ավելի շատ թերություններ ունենք ժողովրդ-
քական տնտեսության այնպիսի առաջարեղիներում, ինչպի-
սին են կոռպերացիան և առևտուրը:

Մեզ մոտ դեռ պատշաճ ուշագրություն չկա արհես-
տագործական կոռպերացիայի աշխատանքին, վորը կոչված
է փոշոր դեր խաղալու լայն ապահովանառության առարկաների, կուլ-
տուր՝ կենցաղային գործածության առարկաների նկատ-
մամբ աշխատավորների բուռն կերպով աճող պահմնչները
բավարելու գործում: Մինչև այսոր մեր կուսակցական
կարգակերպությունները թերագնահատում են արհեստա-
գործական կոռպերացիայի նշանակությունը և տպեցիֆիկ
առանձնահատկությունները, կոռպերացիա, վորը բաղկա-
ցած են նախկին տնտեսագործներից, արհեստավորներից,
իսկ վորոշ մասով են նախկին մանր առևտրականներից: Ար-
հեստագործական կոռպերացիայի կոմունիատ աշխատողնե-
րը, կուսակցության շրջկոմներն առանձնապես պետք է
զգունություն կուցաբերելին, վորովհետեւ իշխանակարգային
թիւնամբն արհեստագործական կոռպերացիայի արտեներում
բարենարաստ հող և գոնում իր քայլայիշ հակահեղափոխա-
կան աշխատանքի համար: Արհեստագործական կոռպերա-
ցիան դեռ չի դարձել Աղբբեջանի բոլոր տնայնագործներին
կարգակերպող հղոր ուժ:

